

ՀՏԴ-338.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՔԱՅԻՆ ՌԵՆՏԱՅԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

**ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ<sup>1</sup>, ԶԱՎԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ<sup>2</sup>**

<sup>1</sup>Երևանի պետական համալսարան

<sup>2</sup>Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Ազգային հարստության ստեղծման գործում բնական պաշարների բաղադրիչի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ գործոնի դերը ՀՀ-ում թերարժևորված է, հատկապես՝ պետական բյուջեի եկամուտների ավելացման գործում: Բացահայտվել է, որ ՀՀ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում ստեղծված հանքային ռենտան (2018 թ.՝ շուրջ 210 մլրդ դրամ) կազմում է զգալի մեծություն, սակայն, չհարկվելով, պետական բյուջեն զրկվում է էական եկամուտներից: Առաջարկվում է ուսումնասիրվող ոլորտում հարկազանձման կառուցակարգի արմատական փոփոխման միջոցով վերացնել այդ բացը:

**Բանալի բառեր.** ազգային հարստություն, բնական պաշարներ, հանքագործական արդյունաբերություն, կապիտալ, տնտեսական ռենտա, հանքային ռենտա, հասույթ:

Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող մակրոտնտեսական բաղադրիչների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ազգային հարստության մեծությունը, որը չափվում է ինչպես առանձին երկրների մասշտաբով, այնպես էլ այդ երկրների բնակչության մեկ շնչի հաշվով: Ազգային հարստության ցուցանիշը ոչ միայն քանակական մեծություն է, այլև առաջին հերթին որակական սինթետիկ ցուցանիշ, քանի որ այն արտացոլում է երկրի ինչպես տնտեսական համակարգի, այնպես էլ սոցիալական ենթակառուցվածքի ներուժի օգտագործման արդյունավետությունը, դրա զարգացման մակարդակը: Այս ցուցանիշն ավելի շուտ բնութագրում է տվյալ երկրում նյութական և հոգևոր բարիքներ ստեղծելու սոցիալ-տնտեսական ներուժի հնարավորությունը, ինչն էլ հիմք է հանդիսանում բնակչության կենսամակարդակի ձևավորման և այն բարձրացնելու համար: Անհրաժեշտ է նաև նշել, որ ազգային հարստության հիմնախնդիրը եղել և շարունակում է մնալ տնտեսագիտության ուսումնասիրության հիմնական առարկան:

Ազգային հարստության ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանության մշակման և քանակական գնահատման աշխատանքները մեծամասշտաբ (գլոբալ) մակարդակով իրականացվել են միայն վերջին 15 տարիների ըն-

թացքում: Համաշխարհային բանկի մասնագետների կողմից առաջին ուսումնասիրությունը հրապարակվել է 2006 թ. “Where is the wealth of nations? Measuring Capital for the 21<sup>st</sup> Century” անվանմամբ, որտեղ ներկայացվել է ինչպես ազգային հարստության հասկացությունը [1, p. 19], դրա գնահատման մեթոդաբանությունը [1, p. 143-158], այնպես էլ տրվել են աշխարհի մի շարք երկրների ազգային հարստության և դրա բաղադրիչների քանակական գնահատականները [1, p. 159-162]: Այս ուղղությամբ Համաշխարհայի բանկի երկրորդ՝ “The Changing Wealth of Nations. Measuring Sustainable Development in the New Millennium” հրապարակումը լույս տեսավ 2011 թ. [2, p. 27-49], որտեղ հստակեցվեցին ինչպես մեթոդաբանական հարցերը, այնպես էլ ընդլայնվեց երկրային գնահատումների շրջանակը: Այս ոլորտում երրորդ ուսումնասիրությունը “The changing wealth of nations 2018. Building a Sustainable Future” անվանմամբ լույս է տեսել 2018 թ. և աչքի է ընկնում ազգային հարստության գնահատման մեթոդաբանության լրամշակմամբ, այն ձևավորող առանձին բաղադրիչների քանակական գնահատմամբ և ուսումնասիրվող երկրների շրջանակի ընդլայնմամբ [3, p. 28-29, 38-39]: **Աղյուսակ 1**-ում բերված է նախկին Խորհրդային Միության հանրապետությունների, ըստ եկամուտների մակարդակի դասակարգված երկրների խմբերի և աշխարհի բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության ցուցանիշների մեծությունը, դրա կազմը և կառուցվածքը վերջին հասանելի գնահատման արդյունքներով:

Ինչպես հետևում է **Աղյուսակ 1**-ի տվյալներից, հարստության մեծությունը և՛ առանձին երկրներում, և՛ ըստ եկամուտների մեծության դասակարգված երկրների խմբերում զգալիորեն տարբերվում է, ինչը պայմանավորված է ազգային հարստությունը ձևավորող առանձին բաղադրիչների հարաբերությամբ: Այսպես, եթե Հայաստանի Հանրապետությունում ընդերքի ակտիվների մեծությունը հարստության կառուցվածքում կազմում է 4.1%, ապա, օրինակ, Ադրբեջանում այդ ցուցանիշը 42.1% է (ավելի քան 10 անգամ գերազանցում է մեր երկրի ցուցանիշը), իսկ Վրաստանում ՀՀ-ի համեմատությամբ այն երկու անգամ ավելի ցածր է: Ակնհայտ է նաև, որ աշխարհում հարստության ձևավորման հիմնական բաղադրիչը մարդկային կապիտալն է (աշխարհի ցուցանիշը 64.5% է), իսկ բարձր եկամուտներով ՏՀԶԿ երկրներում այն կազմում է 70.4%: Հայաստանի Հանրապետությունն այդ ցուցանիշով շատ հետ չի մնում աշխարհի միջին մակարդակից, մեր երկրում մարդկային կապիտալի մասնաբաժինն ազգային հարստության մեջ կազմում է 51.7%, մինչդեռ Ադրբեջանում այն ամենացածրերից մեկն է նախկին ԽՍՀՄ երկրների շարքում և կազմում է ընդամենը 14.0%:

Աղյուսակ 1

**Նախկին Խորհրդային Միության, ըստ եկամուտների մակարդակի դասակարգված երկրների խմբերի և աշխարհի ազգային հարստության մեկ շնչի հաշվով մեծությունը, բաղադրիչների կազմը և կառուցվածքը 2014 թ.**

Երկրները և ըստ եկամուտների դասակարգված երկրների խմբերը	Ազգային հարստություն	այդ թվում				
		առաջնորդ կապիտալ	բնական կապիտալ	որից՝ ընդերքի ակտիվներ	մարդկային կապիտալ	զուտ արտաքին ակտիվներ
Հայաստան	52,894	15,451	12,702	2,150	27,329	-2,588
	100.0	29.2	24.0	4.1	51.7	-4.9
Ադրբեջան	85,341	20,061	45,935	35,938	11,961	7,384
	100.0	23.5	53.8	42.1	14.0	8.7
Բելառուս	99,685	33,388	21,882	1,167	49,004	-4,588
	100.0	33.5	22.0	1.2	49.2	-4.6
Էստոնիա	258,903	91,646	20,093	591	155,041	-7,876
	100.0	35.4	7.8	0.2	59.9	-3.0
Վրաստան	44,327	20,415	7,344	917	21,251	-4,682
	100.0	46.1	16.6	2.1	47.9	-10.6
Ղազախստան	180,911	40,150	66,606	53,440	76,617	-2,461
	100.0	22.2	36.8	29.5	42.4	-1.4
Ղրղըզստան	24,429	6,159	12,570	1,490	6,729	-1,029
	100.0	25.2	51.5	6.1	27.5	-4.2
Լատվիա	236,906	113,746	18,738	0	113,472	-9,049
	100.0	48.0	7.9	0.0	47.9	-3.8
Լիտվա	169,046	63,254	12,758	174	100,081	-7,047
	100.0	37.4	7.5	0.1	59.2	-4.2
Մոլդովա	35,380	14,213	4,898	0	17,852	-1,582
	100.0	40.2	13.8	0.0	50.5	-4.5
Ռուսաստան	188,715	48,807	46,921	38,247	90,812	2,175
	100.0	25.9	24.9	20.3	48.1	1.2
Տաջիկստան	42,286	30,397	7,431	229	5,015	-557
	100.0	71.9	17.6	0.5	11.9	-1.3
Թուրքմենստան	146,831	39,740	59,062	37,843	47,510	519
	100.0	27.1	40.2	25.8	32.4	0.4
Ուկրաինա	56,053	25,171	13,345	5,210	18,952	-1,414
	100.0	44.9	23.8	9.3	33.8	-2.5

Նախկին ԽՍՀՄ երկրների միջինը	115,836	40,186	25,020	12,671	52,973	-2,343
	100.0	34.7	21.6	10.9	45.7	-2.0
Ցածր եկամուտով երկրներ	13,629	1,967	6,421	568	5,564	-322
	100.0	14.4	47.1	4.2	40.8	-2.4
Միջինից ցածր եկամուտով երկրներ	25,948	6,531	6,949	1,944	13,117	-650
	100.0	25.2	26.8	7.5	50.6	-2.5
Միջինից բարձր եկամուտով երկրներ	112,798	28,527	18,960	6,623	65,742	-432
	100.0	25.3	16.8	5.9	58.3	-0.4
Բարձր եկամուտով ոչ ՏՀԶԿ երկրներ	264,998	59,096	80,104	72,074	111,793	14,005
	100.0	22.3	30.2	27.2	42.2	5.3
Բարձր եկամուտով ՏՀԶԿ երկրներ	708,389	195,929	19,525	8,011	498,399	-5,464
	100.0	27.7	2.8	1.1	70.4	-0.8
Աշխարհ	168,580	44,760	15,841	7,262	108,654	-676
	100.0	26.6	9.4	4.3	64.5	-0.4

**Ծանոթություն.** Ուզբեկստանի տվյալները բացակայում են: Համարիչում՝ \$ԱՄՆ, հայտարարում՝ հարստության մեծության նկատմամբ, %-ով:

Կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից “The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future”, International Bank for Reconstruction and Development / The World Bank, 2018, էջ 226-233-ի հիման վրա:

Ժամանակակից տնտեսության միտումներից է զարգացմանը համընթաց աստիճանաբար բնական պաշարների նշանակության և դերի նվազեցումը բարիքների արտադրության գործում: Այնուհանդերձ դրանք այժմ էլ շարունակում են մնալ առանձին երկրների զարգացումը մեծապես պայմանավորող կարևոր գործոն և բնակչության կենսամակարդակի բարձրացման առաջնահերթ պայման: Այդպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը, որի տնտեսական համալիրի անբաժանելի մասն են կազմում հանքագործական արդյունաբերությունը և դրան հարակից տնտեսական գործունեության տեսակները: Ոլորտի կարևորությունը ընդգծելու համար դիտարկենք հանքագործական արդյունաբերության ծավալները, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը: 2019 թ. հունվար-դեկտեմբերին արդյունաբերական ամբողջ արտադրանքի ծավալը կազմել է 2,103,913.7 մլն դրամ, որից հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը կազմել է 356,308.0 մլն դրամ (արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում կազմելով 16.9%), մշակող արդյունաբերությունը՝ 1,468,722.0 մլն

դրամ (69.8%), էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 253,977.8 մլն դրամ (12.1%) և ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարումը և վերամշակումը՝ 24,905.9 մլն դրամ (1.2%) [4, էջ 11-13]:

ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքի (արտահանման ու ներմուծման ծավալները՝ ըստ ապրանքային բաժինների) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019 թ. ՀՀ արտահանման (ընդամենը 2,640,275.1 հազ. \$ԱՄՆ) կազմում հանքահումքային արտադրանքի բաժինը կազմել է 28.1% (կամ 742,894.1 հազ. \$ԱՄՆ), իսկ ներմուծման կազմում՝ 14.7% (ընդամենը 5,513,798.5 հազ. \$ԱՄՆ ներմուծման մեջ կազմելով 813,602.0 հազ. \$ԱՄՆ): Ընդ որում՝ հանքահումքային արտադրանքի արտահանման ցուցանիշը 2019 թ. ՀՀ արտահանման մեջ զբաղեցրել է առաջին տեղը, իսկ ներմուծման մեջ՝ երկրորդ՝ զիջելով միայն մեքենաների, սարքավորումների և կառուցակարգերի ներմուծումը (863,538.2 հազ. \$ԱՄՆ չափով): 2018 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ արտահանման համար՝ 2,412,432.7, 26.7% (644,693.8 հազ. \$ԱՄՆ) և ներմուծման համար՝ 14.5%, 4,975,537.5 հազ. \$ԱՄՆ և 720,727.9 հազ. \$ԱՄՆ [4, էջ 136]: 2018 թ. ապրանքային խմբերի մեջ հանքահումքային արտադրանքի արտահանման և ներմուծման տեղերը մնացել են նույնը:

Հանքագործական արդյունաբերությունից ստացվող հարկային մուտքերի բաժինը 2018 թ. ՀՀ-ում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների շարքում կազմել է 84.7 մլրդ դրամ կամ 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի 9 %-ը<sup>1</sup>: Հարց է առաջանում թե ինչպիսի՞ արդյունավետությամբ է օգտագործվում ՀՀ ընդերքը, մանավանդ որ. «Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով:» [5, հոդվ. 11]: Այս խնդիրը հատկապես կարևորվում է այն պատճառով, որ վերջին 3-5 տարիների ընթացքում զգալիորեն ավելացել են արտահանման ծավալները և հարց է առաջանում արդյո՞ք պետության կողմից հավաքված հասույթները համապատասխանում են այն դրամական հոսքերին, որոնք ստացվում են հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից:

<sup>1</sup> Հաշվարկվել է ՀՀ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից 2018 թ. հարկային տարվա ընթացքում վճարված հարկերի մեծությունների ցանկի հիման վրա, աղբյուրը՝ ՀՀ հարկային ծառայության կայքը՝ <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILlists>, 2020 թ. հոկտեմբերի 7-ի դրությամբ:

Վերը նշված հարցի պատասխանը գտնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորման և ընդերքի սեփականատիրոջ՝ ՀՀ ու ընդերքօգտագործող կազմակերպությունների միջև հանքային ռենտայի բաշխման գոյություն ունեցող պրակտիկական և համամասնությունները:

«Ռենտա» հասկացությունը, այլ դասականների հետ միասին, հանգամանորեն ուսումնասիրել է անգլիացի տնտեսագետ Դ. Ռիկարդոն XVIII դարում, ով արժեքի աշխատանքային տեսության իր աշխատության շրջանակում ռենտան սահմանել է որպես. «Ռենտան ձեռնարկատիրոջ կողմից ստացված լրացուցիչ եկամուտն է, որը ստացվել է ծախսված աշխատանքի և կապիտալի դիմաց շահույթից ավելի»: Ըստ Դ. Ռիկարդոյի՝ ռենտայի ձևավորումը պայմանավորված է ավելի բարենպաստ պայմաններով, երբ մի ձեռնարկատեր մյուսի համեմատ գտնվում է ավելի բարենպաստ վիճակում, օրինակ, մշակում է լավագույն հողատարածքը, ունի արտոնություններ և այլն: Ընդ որում՝ դիֆերենցված (տարբերակված) ռենտա I-ի ստացումն ապահովվում է հողի բերրիությամբ և գտնվելու վայրով պայմանավորված տարբերություններով, երբ լավագույն հողամասերից գյուղատնտեսական արտադրանքի միավորի արտադրության ծախսերն ավելի ցածր են, իսկ շուկայում իրացվող նույնանման արտադրանքի գները ձևավորվում են միջին և վատ բերրիությամբ հողատարածքներում արտադրված արտադրանքի գներին համապատասխան: Դիֆերենցված ռենտա II-ը, ըստ Դ. Ռիկարդոյի՝ այն հավելյալ շահույթն է, որն առաջանում է հողամասերում շարունակաբար կատարվող ներդրումների արդյունքում: Այն կապված է գյուղատնտեսության ինտենսիվացման հետ և այդ գործընթացի կարևորագույն տնտեսական արդյունքներից է [6]:

Տնտեսական ռենտայի ժամանակակից մեկնաբանություններից անդրադառնանք Նոբելյան մրցանակակիր Ջոզեֆ Ստիգլիցի սահմանմանը, ըստ որի. «Ռենտան յուրաքանչյուր եկամուտն է, որը տարբերվում է աշխատանքի վարձատրությունից և կապիտալ ներդրումներից ստացվող եկամուտներից» [7]:

Որպես ռենտայի օրինակներ՝ Ջ.Ստիգլիցը նշում է բնական պաշարների օգտագործումից ստացվող եկամուտները, մենաշնորհային եկամուտները և մտավոր սեփականության օգտագործումից ստացվող եկամուտները: Տնտեսագիտության տեսանկյունից աշխատանքի վարձատրությունից և ռենտայից եկամուտների տարբերությունն այն է, որ աշխատանքային գործունեությունը, աշխատուժի օգտագործումն ավելացնում է ազգային եկամուտի (նոր ստեղծված արժեքի) չափը, իսկ ռենտայից ստացվող եկամուտները՝ ոչ: Ի տարբերություն աշխատանքային պաշար-

ների սեփականատերերի, ռենտա առաջացնող ակտիվների (հողի, օգտակար հանածոների կամ այլ նմանատիպ ակտիվի) սեփականատերերը եկամուտներ են ստանում միայն այն բանի համար, որ նրանք տիրապետում են այդ ակտիվները [7, c. 84]:

Ջ. Ստիգլիցը գրում է, մասնավորապես, որ երկրի հարստությունը պետք չէ շփոթել այդ երկրի անհատների հարստության հետ: Առանձին մարդիկ և կազմակերպություններ հաջողությամբ արտադրում են սպառողներին անհրաժեշտ նոր ապրանքներ: Սա հարստություն կուտակելու լավ միջոց է: Մյուսները հաջողությամբ օգտագործում են իրենց շուկայական դիրքը (հշխանությունը)՝ շահագործելու համար իրենց աշխատողներին և օգուտներ ձեռք բերելով սպառողների հաշվին: Եկամուտների այդպիսի վերաբաշխումն ամենևին էլ չի ավելացնում ազգային հարստությունը: Տնտեսության մեջ նման գործընթացներն ուղեկցվում են ռենտայի ձևավորմամբ, որի ստացումը նպատակ ունի յուրացնելու ազգային եկամուտի ավելի մեծ մասը:

Վերը նշվածի պատճառով քաղաքականություն իրականացնողները պետք է հետազոտեն այն շուկաները, որտեղ գոյություն ունեն մեծ չափերով ռենտայի ստացման հնարավորություններ, քանի որ այդ հանգամանքը վկայում է, որ տնտեսությունը կարող է ավելի արդյունավետ աշխատել: Ռենտայի ստացման համար իրականացվող շահագործումը փաստացի թուլացնում է երկրի տնտեսությունը: Իր հերթին, ռենտան յուրացնելու դեմ իրականացվող պայքարի հաջողությունը թույլ է տալիս պաշարներն ուղղել դեպի հարստության ստեղծումը [7, c. 22-23]:

Տնտեսագետներն առանձնացնում են ռենտայի հետևյալ տեսակները. հողի ռենտա (սահմանափակ քանակությամբ հողի և այլ բնական պաշարների օգտագործման համար վճարվող գինը), ֆինանսական ռենտա (պարբերաբար վճարվող սահմանված չափի վճարումներ), բնօգտագործման ռենտա (ծախսված աշխատուժի և կապիտալի դիմաց շահույթից ավելի ստացված լրացուցիչ եկամուտը), պետական ռենտա (պետական վարկի տեսակ, որի համաձայն պետությունը պարտավորվում է որոշակի պարբերականությամբ վճարել որոշակի եկամուտ՝ փոխառված կապիտալի դիմաց), մենաշնորհային ռենտա:

Մեր ուսումնասիրության շրջանակում անդրադառնանք միայն բնօգտագործման ռենտային, որի ձևավորումը և ստացումը պայմանավորված է ընդերքօգտագործողների մի մասի համար առավել բարենպաստ պայմաններով: Այդպիսի առավելությունները ի հայտ են գալիս, օրինակ, ավելի լավ լեռնահանքային և երկրաբանական բնութագրերով բնական պաշարների հանքավայրերի հայտնաբերման, հետախուզման և արդյու-

նահանման, հանքավայրերի բարձր արտադրողականության, դրանց տեղակայման, կլիմայական ավելի լավ պայմանների, հողի ավելի բարձր բնական բերքատվության և այլ արտոնությունների առկայության հաշվին:

Ընդ որում՝ մի շարք հեղինակների կարծիքով, բնօգտագործման ռենտան համարվում է բնական պաշարների տնտեսական գնահատման պարտադիր տարրերից մեկը: Ա. Ախատովի կարծիքով բնօգտագործման ռենտան կարող է լինել դիֆերենցված ռենտա I և II-ի, ինչպես նաև բացարձակ ռենտայի տեսքով: Նույն հեղինակը բնօգտագործման ռենտան դասակարգում է ըստ լեռնահանքային, երկրաբանական, հանքագործական, ջրային, հողային, անտառային և այլն: Նշվում է նաև, որ դիֆերենցված ռենտա II-ի ստացումը հնարավոր է միայն վերականգնվող բնական պաշարների համար:

Դիտարկելով բնօգտագործման ռենտան՝ անհրաժեշտ է հավելյալ եկամուտների ստացումը դասակարգել ըստ հետևյալ աղբյուրների.

1. ըստ պաշարների ծագման, որը ներառում է բնության բաղադրիչները (հանքային, կլիմայական, ջրային, բուսական, հողային, կենդանական) և բնական-տարածքային բաղադրիչները (ջրային տնտեսությունների, լեռնահանքային արդյունաբերության, անտառային տնտեսությունների և այլն),

2. ըստ տնտեսական օգտագործման տեսակների, որը ներառում է արդյունաբերական (արդյունահանվող) էներգետիկ պաշարները (հանածո վառելիք, հիդրոէներգետիկ պաշարներ, կենսավառելիք, միջուկային հումք), ոչ էներգետիկ պաշարները (հանքային, ջրային, հողային, անտառային, այլն) և գյուղատնտեսական արտադրության պաշարները (ազրոկլիմայական, հողային, բուսական կերային հումքը, ոռոգման, ջրարբիացման ջրերը և այլն),

3. ըստ սպառման ձևերի՝ չվերականգնվող, վերականգնվող, մասամբ վերականգնվող և անսպառ [8, 9]:

Նշենք, որ ՀՀ տարածքում ձևավորված ջրային ռենտայի էֆեկտը նույնպես չի դարձել հետազոտողների ուշադրության առարկան, քանի որ այդ պաշարների մեծ բաժինը, չօգտագործվելով ՀՀ տարածքում, ըստ էության, զրո գնով արտահանվում է հարևան երկու ոչ բարեկամ երկրներ (Թուրքիա և Ադրբեջան): Բավական է նշել, որ ՀՀ տարածքում ձևավորված քաղցրահամ վերականգնվող ջրային պաշարները 2016 թ. կազմել են 6882 մլն խ.մ., որից ընդամենը ջրօգտագործումը կազմել է 2469.9 մլն խ.մ. (կամ ձևավորված ջրային պաշարների 35.9%-ը): Նույն ցուցանիշները 2017 թ. կազմել են համապատասխանաբար՝ 4663 մլն խ.մ., 2040 մլն խ.մ. և 43.7%, իսկ 2018 թ.՝ 6571.4 մլն խ.մ., 1926.5 մլն խ.մ. և 29.3%<sup>1</sup>: Նկատենք

<sup>1</sup> Վերականգնվող ջրային պաշարների թվային ցուցանիշները ներբեռնվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի (ArmStatBank) «Քաղցրահամ ջրերի



նաև, որ հարստությանը նվիրված համաշխարհային բանկի մեր կողմից վերևում նշված ուսումնասիրություններում խոշոր բացթողում կարելի է համարել այն, որ բնական կապիտալի հասկացության մեջ չեն ներառված և գնահատված ջրային պաշարները [3, էջ 5]:

Բնապահպանական ռենտան մեկնաբանվում է որպես գործունեության արդյունքների անորոշությամբ և ռիսկով պայմանավորված վճարում, այդ պատճառով էլ անհրաժեշտ է սահմանել ռիսկի այն համամասնությունը, որն արտացոլում է բնական պաշարների արժեքն ու մարդկանց կյանքի ու կենսագործունեության պայմանների փոփոխությունը, ինչպես նաև մարդկային գործունեության արդյունքում բնական պաշարներին հասցված չվերականգնվող կորստի և որոշակի ժամանակահատվածից հետո դրանց վերականգնման չափերը [8, շ. 68-69]:

Համաշխարհային բանկի կողմից տնտեսությունների զարգացման ցուցիչների շարքում (World Development Indicators) հաշվարկվում է հանքային ռենտան (Mineral rent) որպես արդյունահանված օգտակար հանածոների համաշխարհային գներով արտադրության արժեքի և դրանց արտադրության ընդհանուր ծախսերի միջև տարբերություն: Հաշվարկը կատարվում է հետևյալ խումբ հանքանյութերի համար. անագ, ոսկի, կապար, ցինկ, երկաթ, պղինձ, նիկել, արծաթ, բոքսիտ և ֆոսֆատ:

Պետք է նշել, որ տնտեսական ռենտայի այս սահմանումը տարբերվում է ազգային հաշիվների համակարգում օգտագործվողից, որտեղ ռենտան գույքային եկամտի ձև է, որը ներառում է հողամասերի օգտագործման համար վարձակալների կողմից սեփականատերերին կատարվող վճարումները և/կամ ընդերքօգտագործողների կողմից ընդերքի սեփականատերերին կատարվող այն վճարումները, որոնք թույլ են տալիս նրանց արդյունահանել օգտակար հանածոներ<sup>1</sup>:

Աշխարհի գրեթե բոլոր երկրների համար հաշվարկվող հանքային ռենտայի ցուցանիշը նպատակ ունի ցույց տալ բնական պաշարների ներդրումը (ավանդը) երկրի արդյունաբերական արտադրանքի մեջ, իսկ հաշվարկի մեթոդաբանությունը սահմանված է ազգերի հարստությունը

վերականգնվող պաշարներն ըստ ցուցանիշների և տարիների» աղյուսակից, 2020 թ. հոկտեմբերի 6-ի դրությամբ հասանելի էլեկտրոնային պաշարը՝ [https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_8%20Environment\\_\(C\)%20Water%20resources\\_1.\(C1\)%20Renewable%20freshwater%20resources.%20by%20percentage%20of%20reliability%20and%20years/EE-c1.px/?rxid=3dac1bfc-b4a4-4d55-b629-364c22f8c5a0](https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_8%20Environment_(C)%20Water%20resources_1.(C1)%20Renewable%20freshwater%20resources.%20by%20percentage%20of%20reliability%20and%20years/EE-c1.px/?rxid=3dac1bfc-b4a4-4d55-b629-364c22f8c5a0), իսկ ընդամենը օգտագործված ջրի ծավալներինը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019 թ., էջ 216:

<sup>1</sup> St'u Index mundi, Mineral rents (% of GDP), էլեկտրոնային պաշարը հասանելի է 01.10.2020 թ. դրությամբ <https://www.indexmundi.com/facts/indicators/NY.GDP.MINR.RT.ZS> հղմամբ:

բնութագրող զեկույցում [2, p. 145-146], որտեղ բնական պաշարները դիտարկվում են որպես ազգային հարստության բաղադրիչներից մեկը և ընդունված մեթոդաբանությամբ գնահատումից (հաշվարկումից) հետո ներառվում են երկրի ազգային հարստության կազմում:

Հանքային ռենտայի հաշվարկումը կարևոր է տնտեսական արդյունքի (արտադրության) մեջ բնական պաշարների ներդրման չափերի որոշման, ինչպես նաև երկրների և առանձին տարածաշրջանների (մեզանում՝ մարզերի) կայուն զարգացման վերլուծական դաշտի ստեղծման տեսանկյունից:

Որոշ երկրներում բնական պաշարներից, հատկապես հանածո վառելիքներից և օգտակար հանածոներից ստացվող եկամուտները ՀՆԱ-ի զգալի մասն են կազմում, և այդ եկամուտների մեծ մասը ձևավորվում է տնտեսական ռենտայի տեսքով՝ եկամուտներ, որոնք գերազանցում են պաշարների արդյունահանման ծախսերը: Բնական (այդ թվում՝ հանքահումքային) պաշարները տնտեսական ռենտա են ձևավորում, քանի որ դրանք չեն արտադրվում: Ինչ վերաբերում է ապրանքների արտադրությանը և ծառայությունների մատուցմանը, ապա շուկայի մրցակցային ուժերն ընդլայնում են դրանց առաջարկը մինչև տնտեսական շահույթի զրոյացումը, մինչդեռ բնական պաշարները, որոնց առաջարկը սահմանափակ է, հաճախ թույլ են տալիս ապահովել դրանց արտադրության ծախսերը զգալիորեն գերազանցող հասույթ (դրամամուտք): Չվերականգնվող պաշարներից՝ հանածո վառելիքից և մյուս օգտակար հանածոներից ստացված ռենտան, ինչպես նաև անտառների գերօգտագործումից ռենտան ցույց են տալիս, որ երկրի կապիտալը սպառվում է: Եվ երբ երկրներում նման ռենտան օգտագործվում է ընթացիկ սպառման նպատակներով, այլ ոչ թե նոր կապիտալ ներդրումներ իրականացնելու համար, որոնք կփոխարինեն արդեն ծախսված (սպառված) կապիտալը, ապա նրանք, փաստորեն, փոխառություններ են վերցնում իրենց ապագայի հաշվին:

Հանքային ռենտայի հաշվարկի մեթոդաբանությունն այն է, որ բնական պաշարների ռենտան հաշվարկվում է որպես ապրանքի գնի և դրա արտադրության միջին արժեքի միջև տարբերություն: Այն հաշվարկվում է որպես առանձին ապրանքների միավորների համաշխարհային գներով վաճառքի և արդյունահանման միավորի միջին ծախսերի (ներառյալ կապիտալի բնականոն (նորմալ) եկամտաբերությունը) տարբերություն: Այնուհետև միավորի հաշվով ստացված ռենտայի մեծությունները բազմապատկվում են համապատասխան պաշարների արդյունահանման ֆիզի-

կական ծավալներով: Այդպիսով հնարավոր է դառնում որոշել յուրաքանչ-յուր որոշակի ապրանքատեսակից ստացվող հանքային ռենտան համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ<sup>1</sup>:

**Աղյուսակ 2**

**«Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալի և հանքային ռենտայի հարաբերակցության հաշվարկը 2014-2018 թթ.»**

	2014	2015	2016	2017	2018
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով), մլն դրամ	4,828,626.3	5,043,633.2	5,067,293.5	5,564,493.3	6,017,035.2
%	100.0	100.0	100.0	100.0	100.0
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ), մլն դրամ	546,334.9	535,801.1	508,803.6	572,075.0	639,224.8
%-ով ՀՆԱ-ում	11.3	10.6	10.0	10.3	10.6
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով), մլն դրամ	4,282,291.4	4,507,832.1	4,558,489.9	4,992,418.3	5,377,810.4
%-ով ՀՆԱ-ում	88.7	89.4	90.0	89.7	89.4
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում*, մլն դրամ	102,553.2	107,717.5	130,835.2	185,510.3	169,794.8
%-ով ՀՆԱ-ում	2.1	2.1	2.6	3.3	2.8
Հանքային ռենտան, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ	3.2	3.8	4.4	5.7	6.3
Հանքային ռենտայի տոկոսադրույքի և հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման տնտեսական գործունեության մասնաբաժնի տարբերությունը, %-ով	1.0	1.6	1.8	2.4	3.5
մլն դրամ	49,695.1	81,536.5	89,768.6	131,409.8	210,309.7

**Աղբյուրը՝** Հայաստանի ազգային հաշիվները 2008, Եր., ՀՀ ԱՎԾ, 2008, էջ 30-34, Հայաստանի ազգային հաշիվները 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 32-35, Հայաստանի ազգային հաշիվները 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 37, ՀՀ ՎԿ-ի Տվյալների բազաներ/ Այլ տվյալների բազաներ/ Ազգային հաշիվներ (2012-2019թթ. համար), <https://www.armstat.am/am/?nid=202>

<sup>1</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի տվյալների բազաներում ներառված ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ մեթոդական պարզաբանումները <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MINR.RT.ZS>

Այսպես, Համաշխարհային բանկի մասնագետների կողմից կատարված հաշվարկների համաձայն ՀՀ հանքային ռենտայի մեծությունը՝ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է. 1992 թ.՝ 0.11, 1995 թ.՝ 0.73, 2000 թ.՝ 0.34, 2005 թ.՝ 0.89, 2010 թ.՝ 2.69, 2014 թ.՝ 3.15, 2015 թ.՝ 3.75, 2016 թ.՝ 4.35, 2017 թ.՝ 5.7 և 2018 թ.՝ 6.32%<sup>1</sup>:

Մեր կողմից կատարված հաշվարկները փաստում են (**Աղյուսակ 2**), որ հատկապես վերջին տարիներին ՀՀ հանքագործական արդյունաբերության ոլորտում զգալիորեն ավելացել են արտահանման ծավալները, ինչն էլ հանգեցրել է զգալի չափերի հասնող հանքային ռենտայի ձևավորմանը: Սակայն, ինչպես փաստում են կատարված հաշվարկները, այդ ռենտան, ըստ էության, չի ավելացնում ՀՀ ազգային հարստությունը: Օրինակ՝ 2018 թ. տվյալներով հանքային ռենտայի մեծությունը կազմել է ավելի քան 210 մլրդ դրամ, որից օգտակար հանածոների սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետությունը, ոչինչ չի ստացել:

Սա առնվազն նշանակում է, որ հանքարդյունահանման ոլորտում արմատական բարեփոխումներ անհրաժեշտ է իրականացնել հարկազանձման բնագավառում, այն հաշվով, որ հանքային ռենտայի զգալի մեծությունը փոխանցվի ՀՀ պետական բյուջե՝ ծառայելով հանրային շահերի իրականացմանը, այլ ոչ թե յուրացվի հանքագործական արդյունաբերության առևտրային կազմակերպությունների կողմից: Այս ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող առաջնային քայլերը կարող են բաժանվել երկու մասի՝ 1) հետազոտական և 2) գործնական: Հետազոտական բաղադրիչը պետք է ներառի առանձին հանքավայրերում և դրանք շահագործող առևտրային կազմակերպություններում հանքային ռենտայի ձևավորման իրավաօրենսդրական ու տնտեսագիտական հիմքերի և ռենտայի ձևավորման կառուցակարգերի ուսումնասիրությունը: Գործնական բաղադրիչը պետք է ներառի ՀՀ հարկային օրենսգրքում [10] փոփոխությունների կատարումը, մասնավորապես օրենսգրքի հոդվածներ 202-ում (Ռոյալթիի բազան) և 209-ում (Ռոյալթիի դրույքաչափը) փոփոխություններն ու լրացումները: Դրանց իմաստն այն է, որ ՀՀ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում ձևավորվող ռենտայի զգալի մասը պետք է մասհանվի ՀՀ պետական բյուջե, ինչպես նաև հստակեցվեն ու պարզեցվեն ռոյալթիի հաշվարման համար բազա հանդիսացող կազմակերպությունների շահույթներից կատարվող նվազեցումները՝ դրանով իսկ կանխելով այդ կազմակերպությունների միտումնավոր վնասաբերությունը:

<sup>1</sup> **Աղբյուրը**՝ Համաշխարհային բանկի տվյալների բազաներում ներառված ցուցանիշները, տե՛ս 2020 թ. հոկտեմբերի 7-ի դրությամբ հասանելի <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MINR.RT.ZS> էլեկտրոնային պաշարը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Where is the wealth of nations? Measuring Capital for the 21st Century, The International Bank for Reconstruction and Development/The World Bank, Washington, D.C., 2006, 188 pages.

2. The Changing Wealth of Nations. Measuring Sustainable Development in the New Millennium, The International Bank for Reconstruction and Development/The World Bank, Washington, D.C., 2011, 222 pages.

3. The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future, International Bank for Reconstruction and Development / The World Bank, Washington, D.C., 2018, 234 pages.

4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2020 թ., 300 էջ:

5. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թ. նոյեմբերի 28-ին, ՀՕ-280-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական [www.arlis.am](http://www.arlis.am) կայքում:

6. **Николайчук О. А.** Земельная рента — реальная или ложная социальная стоимость, [https://www.nifi.ru/images/FILES/Journal/Archive/2011/2/statii/2011\\_02\\_03.pdf](https://www.nifi.ru/images/FILES/Journal/Archive/2011/2/statii/2011_02_03.pdf)

7. **Стиглиц Дж.** Люди, власть и прибыль. Прогрессивный капитализм в эпоху массового недовольства //пер. Вячеслав Ионов; научный редактор Николай Злобин. — М.: Альпина Паблишер, 2020, 430 с. Электронный ресурс: <https://www.alpinabook.ru/catalog/book-638085/>

8. **Иванченкова Л.В.**, Природная рента и экологический налог, “ЕКОНОМІКА ХАРЧОВОЇ ПРОМИСЛОВОСТІ” № 1(17), 2013, с. 68-69.

9. **Ахатов А.Г.** Ресурсы нефти и газа России на рубеже веков (экономические и эколого-экономические аспекты) / А.Г. Ахатов, А.А. Ильинский. - М. : Недра, 1998. – 432 с.

10. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թ. հոկտեմբերի 4-ին, ՀՕ-165-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական [www.arlis.am](http://www.arlis.am) կայքում:

---

## ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ ГОРНОЙ РЕНТЫ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АШОТ МАРКОСЯН<sup>1</sup>, ЗАВЕН МКРТЧЯН<sup>2</sup>

---

<sup>1</sup>*Ереванский государственный университет*

<sup>2</sup>*Национальный аграрный университет Армении*

---

Исследование показывает, что роль природных ресурсов в создании национального богатства РА недооценена, что особенно отражается в деле увеличения доходов государственного бюджета. Выявлено, что минеральная рента, создаваемая в горнодобывающей промышленности РА (около 210 млрд драмов в 2018 году) составляет значительную сумму, однако поскольку эти доходы не облагаются налогом, государственный бюджет лишается значительных вливаний. Этот пробел предлагается ликвидировать путем кардинального изменения механизма налогообложения горнодобывающей отрасли.

**Ключевые слова.** национальное богатство, природные ресурсы, горнодобывающая промышленность, капитал, экономическая рента, минеральная рента, доход.

## THE PROBLEM OF FORMATION OF MINERAL RENT IN THE MINING INDUSTRY OF THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT MARKOSYAN<sup>1</sup>, ZAVEN MKRTCHYAN<sup>2</sup>

---

<sup>1</sup>*Yerevan State University*

<sup>2</sup>*National Agrarian University of Armenia*

---

The study shows that the role of natural resources in creating the national wealth of the Republic of Armenia is underestimated, which is especially reflected in the increase in state budget revenues. It was revealed that the mineral rent created in the mining industry of the Republic of Armenia (about 210 billion drams in 2018) is a significant amount, but since these revenues are not taxed, the state budget is deprived of significant investments. It is proposed to fill this gap by radically changing the mechanism of taxation of the mining industry.

**Keywords:** national wealth, natural resources, mining, capital, economic rent, mineral rent, income.

*Ներկայացվել է խմբագրություն 08.10.2020  
Երաշխավորվել է տպագրության 03.12.2020*